

## BOOST Inter-coaching Training

25.05.2017թ.-ին Հայկական պետական մակավարժական համալսարանում տեղի ունեցավ Inter-coaching վերապատրաստում՝ HARMONY ծրագրի ներկայացուցիչների մասնակցությամբ: Ներկայացվեց երկու ծրագրերի համագործակցության հնարավոր շրջանակները:

HARMONY ծրագիրը գործում է 1.5 տարի: Ըստ աշխատանքային փաթեթների իրականացվել են հետևյալ գործողությունները.

1. Ուսումնասիրվել է ծրագրի գործընկեր համալսարանների միջազգայնացման փորձը:
2. Մշակվել է 2 հարցաշար՝ բացահայտելու բուհերի միջազգայնացման մակարդակը: Հարցաշարերից մեկը՝ ներքինը, փորձակվել է միայն ծրագրի մասնակից բուհերի շրջանում, իսկ արտաքինը՝ մասնակից պետությունների համասարանների համար: Հարցաշարերը հնարավորություն են ստեղծում դիտարկել այն ցուցիչները, որոնք անհրաժեշտ են բուհերին միջազգայնացման համար:
3. Ներկայացվել է հարցաշարերի վերլուծությունը: Հայաստանյան բուհերի համար հատկապես անհրաժեշտ է ուշադրությունը թիրախել նախարարության և բուհի բյուջետային հատկացումներին՝ զարկ տալու միջազգայնացման գործընթացին (հարցաշարերում ամրագրված է, թե բուհի ընդհանուր բյուջեն որքան է կազմում, որքան է կազմում արտաքին ծրագրերից եկած գումարը և որքան տոկոս է այն կազմում ընդհանուր բյուջեի մեջ, նույն կերպ նաև հաշվարկվում են հատկացումները):

Ծրագրի համակարգող և մասնակից բուհերը պատրաստակամ են տրամադրելու ծրագրի շրջանակներում իրենց կատարած աշխատանքները, համագործակցել BOOST ծրագրի մասնակիցների հետ, ձեռք բերել և օգտագործել BOOST ծրագրով նախատեսված մշակվող փաթեթները, ինչպես նաև իրականացնել համատեղ գործողություններ:

